



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՓՐԿՁԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, հինգշաբթի, «Տօն ծննդեան և մկրտության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր Աթոռում, ավանդական շուքով և հանդիսությամբ, տոնվեց Աստվածահայտնության տոնը:

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մայր Տաճարում, ամբողջ միաբանության և Ճեմարանի ուսանողության մասնակցությամբ:

Ժամը 11-ին, օրվա մեծ խորհրդի ներշնչման տակ, Մայր Տաճարի զանգերը հնչում են տոնական ու ավետավոր, մինչ հինավուրց Տաճարի խնկաբույր կամարների տակ, աղոթքի մրմունջների, զվարթ լույսերի հեղեղի մեջ, թնդում է Մենդյան հոգեզմայլ շարականը՝ «Խորհուրդ մեծ և սփանջելի»:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Օրը՝ զարնանային, հաճելի և արևոտ:

Մայր Տաճարը լիքն է աղօթավոր հավատացյալներով և ուխտավորների բազմությամբ: Աջակողմյան ու ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք:

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, Վեհաբանում զգեստավորված, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, առաջնորդվում է Մայր Տաճար, Ս. Մենդյան հանդիսավոր պատարագը մատուցելու:

Ս. Սեղանին սպասարկում են Տ. Ներսես ծայրագույն վարդապետը, Տ. Արսեն վարդապետը, Տ. Հովհաննես և Տ. Նշան քահանա հայրերն ու սարկավազները:

Մայր Տաճարի երգեցիկ խումբը շնորհալիորեն կատարում է սուրբ պատարագի եկամայլան և Կոմիտասյան հոգեզմայլ երգեցողությունը:

«Տեր ողորմեա»-յից առաջ, Վեհափառ Հայրապետը Փրկչի Ս. Մենդյան մեծ խորհրդի

ավետիսը տալով Հայ եկեղեցուն և բովանդակ հայության, խոսում է բովանդակալից և ոգեշունչ հետևյալ քարոզը, օրվա տոնի համամարդկային հոգևոր, բարոյական նշանակության մասին, համեմված կրոնաբույր և հայրենաշունչ խոհերով:

«Փառք ի բարձունս Աստուծոյ,
և յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն»:

(ՂԱՌԿԱՍ Բ 14)

Բերդեհեմ... երկու հազար տարիներ առաջ...:

Խաղաղ ու պայծառ գիշեր էր: Հոգնած ու տառապած մարդիկ կնիրհեին, հույսի տեսիլքներ պինդ ծրարած իրենց արտերում մեջ: Աշխարհ լեցուն էր արցունքով ու վշտով: Ծանր էր և տխուր՝ ապրիլ գոռոզ ու դաժան կեսարներու լուծին տակ: Ո՞ր էր արդարությունը: Ե՞րբ պիտի հնչեր փրկության ժամը: Մարդիկ ու ժողովուրդներ ե՞րբ պիտի շնչեին ազատ: Ե՞րբ պիտի իջներ խաղաղությունը հոգիներում և աշխարհին վրա: Այս սուրբ սպասումները կանգնեին ամեն օր, ամեն ժամ, և մարմին ու հոգի կատանային հրեղեն տեսիլքներու ջերմությամբ: Ինչքան ծանր էր լուծը կյանքին և դաժան՝ կարգն ու օրենքները բռնակալներուն, այնքան ջերմ ու կախարդիչ կդառնային երազները Իսրայելի խոնարհ ու տկար գավակներուն: Եվ երազը ավելի էր իրական ու տիրական: Ամբոխները կհուսային, կապաւեին, կհավատային: Եվ Աստված էր անոնց գերագույն ապավենը, գերագույն հզորիչը, գերագույն ստուգությունը:

Եվ ահավասիկ այդ գիշեր, մարդասերն Աստված բացավ Աշխարհի վրա դռները Իր ողորմության և ավետեց ծագումը Արդարության Արեգակին, Խաղաղության Իշխանին՝

ծնունդովը իր Որդվույն: Արարչագործության այդ սուրբ պահուն, երկնքի հրեշտակները երազ երգը երգեցին, ավետիքը փրկության՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Այսպէս ահա ծնալ Մանուկն Հիսուս, իբրև պատասխան երկնային գթության և արդարության, զոր աշխարհի բոլոր հոսացալ հոգիները և բոլոր դարերը ընդունեցին որպէս Փրկիչ ազգի մարդկան:

Մարդացալ Աստուծո Որդին, տնօրինաբար հաստատելու համար սիրո և խաղաղության ուխտը մարդոց աշխարհին մեջ և ցույց տալու բոլոր մահկանացուներուն ճանապարհը ճշմարիտ փրկության և հաւիտեական կյանքին:

«Ձի ալնալս սիրեաց Աստուած գաշխարհ, մինչև գՌդին իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի Նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յափտեանականս» (Յովհ. Գ. 16):

Հիսուս ծնալ և աշխարհի մեջ ապրեցալ, պատգամելու համար մարդուն, թե խաղաղության ու փրկության ճամբան կանցնի անոր հոգիին մեջէն: Մարդկային պայմանէն իսկ կրկնէ այս ճշմարտությունը, իբրև արարչագործության հիմքերէն մին:

Մարդը ինք պիտի սորվի ընդունիլ ու բնակեցնել իր հոգիին մեջ Աստուծո պատգամները, մարդը ինք իր հոգիով պիտի կերպարանափոխվի՝ պիտի վանէ իր սրտէն գոռոգությունը, իշխանամոլությունն ու նախանձը և տենչը հափշտակելու, ոսկի և արծաթ դիզելու, որպէսզի իր և իր նմաններուն աշխարհին մեջ արդարություն և խաղաղություն ըլլա և ինք դառնա ժառանգորդ երկնքի արքայության:

Աստված մարդացալ, որպէսզի մարդը մոտենա աստվածային կատարելության և հասնի փրկության ափին:

Հիշեցե՛ք Հիսուսի խոսքը՝ «Պատուիրանն որ տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս»։ «Յայսմ գիտացե՛ն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս» (Յովհ. Ժ. Գ. 34-35):

Եթէ մարդիկ չսորվին զիրար սիրել, չեն կրնար զԱստված սիրել: Փոխադարձ սէրը և հաճությունը մարդոց միջև. ահա՛ իրաւ ճշանդ աստվածափրկություն:

Սիրո և խաղաղության երկնային պատգամի իրագործումը երկրի վրա. ահա՛ ճանապարհը երկնային արքայության: Մարդու հոգիի մեջ է սկիզբը բոլոր բարիքներուն, ինչպէս և բոլոր չարիքներուն: Նորէն հիշենք Հիսուսի խոսքը, թե «Արքայութիւնն Աստուծոյ ի մերքս ի ձեզ է»:

Արդարությունը և խաղաղությունը մարդկային կյանքի մեջ կրնան ճշմարտապէս կենսագործվիլ մարդոց հոգիներու խաղաղությամբ ու գործերու արդարությամբ:

Հիսուսի ծնունդէն հետո, երկու հազար տարիներու ընթացքին, շատ անգամներ մարդիկ ու ժողովուրդներ ապրեցան և լուսավորվեցան Աստվածորդվույն ծննդյան պատգամներով, իրենց կյանքին մեջ իրականացնելով բավարար չափով մը՝ սիրո և խաղաղության պատվիրանը: Բայց եղան ժամանակներ շատ հաճախ, երբ մարդիկ ու ազգություններ հեռացան աստվածադիր պատվիրաններէն, և կյանքը վերածվեցաւ արցունքի և տառապանքի հովիտի, հորն ու սուրը լափեցին բլուր-բլուրավոր անմեղ կյանքեր, կործանեցան շեն քաղաքներ ու ուստաններ, փչացան ու հողմացրիվ եղան անթիվ անհամար քաղաքակրթական արժեքներ: Եղան, այո՛, անգթության և խելագար չարագործության շրջաններ, երբ գազանային կույր կրքերը սանձարձակ փոթորկված, աշխարհը վերածեցին դժոխքի: Քառսը հոգիներուն՝ աշխարհն ու կյանքը վերածեց քաոսի: Եղան, այո՛, բազում անգամներ Հողովեռնեաներ, մահվան գործիքներ, ավերակներու ճարտարապետներ: Եվ քանի՞-քանի՞ անգամներ մեր այս տառապած երկրագունդի վրա սերունդներ, բազմություններ և նույնիսկ ամբողջ ցեղեր բնաջինջ եղան, ինչպէս պատահեցաւ մե՛ր ժողովուրդին, հայ ժողովուրդին հիսուն տարի առաջ, սուլթանական Թուրքիո խավար ու դաժան, մահաժին օրերուն:

Այսօր, երբ մարդու իմացական հանճարը հաջողած է տիրանալու նյութի ահեղ ուժերու ամբողջական սանձազերծման միջոցներուն, արդյոք նույն մարդը պիտի կարողանա՞ իր հոգիին մեջ բարոյական բավարար գործունեւ ունենալ, սիրո և խաղաղության ոգի, կարենալու համար իրապէս տերը դառնալ նյութին և անոր ուժերուն: Արդյոք մարդը բարոյապէս արժանի պիտի դառնա՞ իր իմացական հանճարին:

Նյութի հյուլեական ուժերու սանձազերծումը այսօր իրողություն է: Արդ, մեծագույն հարցը կղրվի՞ մարդը ինչպիսի՞ դաշինք պիտի կնքէ անոնց հետ: Արդյոք ան իր իսկ հայտնաբերած ուժերով պիտի խորտակվի՞, թե պիտի տիրակալէ ու օգտագործէ զանոնք՝ իր կյանքի խաղաղության ու երջանկության համար: Ո՞վ դաշինք պիտի կնքէ մարդու իմացական հանճարին հետ, մարդու բարոյական հանճարը, թե նույն մարդու կույր կիրքերն ու վայրագ մղումները: Ո՞վ դաշինք

պիտի կնքե հյուլեական ուժերուն հետ, պատերա՞զմը, թե խաղաղ աշխատանքը:

Այսօր, ավելի քան երբեք պատմության ընթացքին, չկա ավելի ըղձալի գաղափար, ավելի փրկարար պատգամ, քան երկնքի հրեշտակներուն ավետիսը, որ մեզի կբաշխըվի Հիսուսի Ս. Ծննդյան շնորհներով.

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Աստված նյութական տիեզերքը ստեղծեց լույս սփռելով և ներդաշնակ խաղաղութիւն հաստատելով ժամանակի և տարածության մեջ: Այսպէս է, որ **Քառսը** վերածվեցաւ **Կոզմոսի**, այսինքն խաղաղի անդունդներուն մեջ աներևոյթ և անպատրաստ երկիրը դարձաւ ներդաշնակ, օրինաչափ, լուսավոր գոյութիւն մը:

Նույն Արարաչիւղ Իր Որդին Հիսուս երկիր առաքեց, այս անգամ սիրո լույսը ծաղեցնելու և խաղաղութեան ոգին հաստատելու համար մարդոց հոգեկան աշխարհին մեջ:

Աստվածային արարչագործութիւնը խաղաղութեամբ սկիզբ առաւ ու ներդաշնակ տիեզերք մը ստեղծեց: Սկզբունքը խաղաղութեան և ներդաշնակութեան՝ պայման է նաև մարդկային հասարակական կյանքի, մարդկային բարոյական կյանքի, շինարար ու ստեղծագործ աշխատանքի:

Տոնախմբելով և փառաբանելով մեր Տիրոջ ու Փրկչի Ծննդյան և Աստվածահայտնութեան հիշատակը, Մենք, իբրև բազմադարյան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ առաջին սպասավորը, կիսունարհինք Միածնաւէջ այս նվիրական Տաճարի Սեղանի առաջ և կուխտենք անգամ մը ևս հաւատարիմ մնալ «**Էկենաց և խաղաղութեան ուխտ**»-ին (Մաղաքիա Բ 5):

Կաղութենք աշխարհի խաղաղութեան և ժողովուրդներու միջև բարի կամեցողութեան գարգացման համար:

Կաղութենք քրիստոնեական եկեղեցիներու և աշխարհի բոլոր կրօններու եղբայրակցութեան և խաղաղ ու համերաշխ գործակցութեան համար:

Կաղութենք խաղաղութեան, հոգևոր-եկեղեցական միութեան և ազգային միասնութեան ամրապնդման համար, մեր Մայր Եկեղեցւոյ և մեր հարազատ ժողովուրդի ծոցին մեջ, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Փրկչի Ս. Ծննդյան շնորհներով, նոր տարին, որ սկիզբ առաւ ամառ, թող ըլլա խաղաղութեան, բարեկամութեան և շինարար աշխատանքի տարի ամբողջ մարդկութեան համար, հալ ժողովուրդի համար, մեր վերածնած Մայր Հայրենիքի համար:

«Մէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Տիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ»:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ»:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, կատարվում է Զրօրհնյաց սրբազան կարգը, Ավագ Սեղանի բեմի առաջ, ի հիշատակ Քրիստոսի մկրտութեան Հորդանան գետում:

Եկեղեցական արարողութեան ավարտին՝ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան:

Լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան տոնը հանուն Մայր Աթոռի միաբանութեան, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր Ժեմարանի դասախոսական կազմի, Մայր Աթոռի պաշտոնեական և բոլոր ներկաների:

Վերջում օրհնութեան խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, Իր շնորհակալութիւնը հայտնում եղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթութիւնների համար, ապա օրհնում բոլորին, բարեմաղթելով անսասանութիւն Մայր Աթոռին, պայծառութիւն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, բարօրութիւն հայրենիքին և խաղաղութիւն աշխարհին:

Ժամը 4-ին, Վեհարանում, Մայր Աթոռի միաբանութիւնը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և այլ պաշտոնական անձինք սեղանակից են լինում Վեհափառ Հայրապետին: Հյուրերի թվումն էին Նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինութեան կենտրոնական հանձնաժողովի քարտուղար, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող արժանապատիվ Տ. Լեոն քահանա Առաքելյանը, ընկերակցութեամբ ճարտարապետ Վալերի Կահնի և կառուցող ինժեներ Ռոբերտ Բարրի:

Ժամը 6-ին, խմբովին երգված Տերունական աղոթքով, ավարտվում է ընդունելութիւնը:





ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔԸ

(Գործ՝ պատանի խոստումնալից նկարիչ Վահան Քոչարի)